

Մխիթար Սեբաստացի կրթահամալիր պետական
քոլեջ

«Գրադարանային գործ» բաժին

Դիպլոմային աշխատանք

Թեմա՝ *«Համայնքային գրադարանի դերը
հասարակական և կրթական համակարգում»*

*Ուսանող՝ Ադունիկ Նալբանդյան
Ղեկավար՝ Լուսինե Ալեքսանյան*

Երևան 2019

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

«Համայնքային գրադարանի դերը հասարակական և կրթական համակարգում»

Ներածություն

Գլուխ 1

Գրադարանների ստեղծման պատմությունից

1.1. Գրադարանների դերը եվ նշանակությունը ժամանակակից աշխարհում

1.2. *Առաջին գիրքի ստեղծումը:*

1.3. *Էլեկտրոնային գիրքի մասին:*

1.4. Գրացուցակ

Գլուխ 2

Ստեփանավան քաղաքի համայնքային գրադարանը

2.1. Գրադարանի պատմությունից

2.2. Բլոգը ժամանակակից գործիք: Բլոգի մասին

Եզրակացություն

Գրականության ցանկ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դեռևս հնագույն ժամանակներից մարդը փորձել է տեղեկատվություն փոխանցել գրի միջոցով: Հնում գրադարանները եղել են վանքերին ու մենաստաններին կից, տեղակայվել են առանձին շինություններում կամ վանքամերձ քարայրներում:

Գրադարանները ազգերի, հոգևոր կյանքի և մշակույթի զարգացման մեջ կատարել ու այսօր էլ կատարում են անփոխարինելի դեր: Յուրաքանչյուր գրադարան

կոչված է իրականացնելու իրեն հատուկ գործառույթները՝ պատմամշակութային տեղեկատվական, հաղորդակցական, տեխնոլոգիական, մանկավարժական, վիճակագրական, սպասարկման և այլն: Որևէ գրադարանի առաջնահերթ խնդիրն է կազմակերպել իր գրականության վերաբերյալ տեղեկատվություն՝ ընթերցողներին լավագույնս սպասարկելու համար: Ուստի՝ անհրաժեշտ է սպասարկելի դարձնել գրադարանի գրքային ունեցվածքը: Դա նշանակում է՝ ստեղծել տեղեկատուներ, որոնցով հնարավոր լինի ընթերցողներին տեղյակ պահել գրադարանի ունեցած գրականության մասին՝ նրանց ապահովելով անհրաժեշտ տեղեկատվությամբ: Գրադարանի՝ մշակութային հաստատություններից մեկի սոցիալական գործառույթները մարդկության պատմության ընթացքում ենթարկվել են փոփոխությունների:

Առաջին գրադարանների նպատակը եղել է փաստաթղթերի պահպանումը: Գրադարանը վերածվել է հասարակական կառույցի, որը ներառում է տեղեկատվական և մշակութային բաղադրիչներ և ապահովում է հասարակակա և կապերի ու հարաբերությունների կայունությունը:

Գրադարանային գործի արդիականացումը դարձել է անխուսափելի մեր օրերում, քանի որ կյանքն արագ քայլերով առաջ է սլանում՝ իր հետ բերելով նորանոր տեխնոլոգիաներ ու հմտություններ:

Համակարգիչների ի հայտ գալը, տեխնոլոգիական փոփոխություններն արդեն իսկ հասել են ընթերցողներին և առաջացրել նրանց մտահոգությունը: Ցանցային գրադարանը

ավելի բարդ մեխանիզմ է, որը նախատեսված է լայն շրջանակների օգտագործման համար: Հիմնվելով այս ամենի վրա՝ կարելի է հստակորեն ասել, որ գրադարանային գործի արդիականացումը արդեն իսկ սկսված է: Շատ հավանական է, որ մոտալուտ ապագայում գրադարանները աշխատեն ամեն տեսակի փաստաթղթերի հետ: Յուրաքանչյուր գրադարանային ֆոնդի հարաբերակցությունը այդ փաստաթղթերի հետ կլինեն տարբեր և զանազան, և թե ինչպես կաշխատեն ապագայում գրադարանները, մեզ անհայտ է: Ինչպես պնդում է Մայքլ Բակլենդը, գրադարանային գործի նպատակները, որոնցով դրանք իրականացվել և իրականացվում են, կարող են և պետք է տարբերվեն:

Առաջին հայացքից նորարարական մեթոդները թվում են շատ պարզ և բոլորին հասանելի: Ծանոթանալով հոդվածներին, որոնք ուղղված են այս թեմաներին, մենք կարող ենք հստակորեն պատկերացնել, թե ինչպիսին է եղել ավանդական գրադարանը, ինչպիսին է այն հիմա, և ինչպիսին կլինի այն հետագայում: Երբ համեմատության մեջ ենք դնում ավանդական և մեր օրերի գրադարանները, բնավ պարտադիր չէ համաձայնել բոլոր պնդումների հետ:

Մայքլ Բակլենդը էլեկտրոնային գրադարանը ընկալում է որպես մի երևույթ, որը ցանկալի է, բայց ոչ պարտադիր՝ մշտապես օգտագործելու համար: Ըստ նրա՝ գրադարանային նյութերը կարող են պահվել և օգտագործվել էլեկտրոնային եղանակով, բայց այս

ամենը չի խանգարում մեզ այդ գրականությունն օգտագործել տպագիր վիճակում: Ներկայիս փաստաթղթերի մեծ մասը պահվում են հենց տպագիր, որի հիման վրա կարող ենք ասել, որ անցյալի վախերը, թե էլեկտրոնային գրականության դարաշրջան է մոտենում, ապարդյուն եղան: Ամենայն հավանականությամբ էլեկտրոնային գրադարանում ոչ միայն կպահվեն էլեկտրոնային և ավանդական փաստաթղթեր, այլև դրանց հիբրիդները: Գրադարանները, որոնք կկարողանան ներկայացնել բարձրակարգ տեքստերի և պատկերների տպագրություն, իրենց վրա կվերցնեն գրքերի առք ու վաճառքը: Գրադարանն էապես սպասարկող հաստատություն է, հետևաբար կարևոր և լավ է այն ամենը, ինչ հարմար և օգտակար է ընթերցողների հոծ զանգվածին:

Գրադարանները, ֆոնդերը, տեխնիկական նորարարությունները իրենք իրենցով ոչինչ չեն նշանակում, այլ միջոց են՝ նպատակներին հասնելու համար: Էլեկտրոնային գրադարանի խնդիրն է գիտելիքների և տեղեկատվության տարածումը, քաղաքակրթության և մշակույթի պահպանումը, հոգևոր և հասարակական կյանքի աջակցությունը: Մայքլ Բաքլենդը իր գրքերում ներկայացրել է էլեկտրոնային գրականության կարևորությունը և ապացուցում, որ մենք կարող ենք խիզախորեն նայել դեպի ապագա նորարարությունները՝ չափսոսալով անցյալի համար: Այն առաջխաղացման և հեռատեսական համակարգ է, որը միտում ունի միայն դրական փոփոխություններ մտցնելու մեր առօրյայում:

Աշխատանքում անդրադարձ է արվում գրադարանների ստեղծման պատմությանը, գրքին և էլեկտրոնային գրքերի ստեղծմանը: Դիպլոմային աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից, եզրակացությունից և գրականության ցանկից: Կարծում եմ՝ ընտրված թեման խիստ կարևոր է և արդիական, քանի որ անդրադարձ է արվում համայնքային գրադարաններին, նրանց դերին ու նշանակությանը, ինչպես նաև զարգացմանը, ինչն արդիական և հրատապ հարց է:

Շատ կարևոր է գործընթաց է սկսվել համայնքային գրադարանների նորացումն ու հզորացումը, ինչը մեծապես կնպաստի գրադարանների առաջընթացին:

Գլուխ 1

Գրադարանների ստեղծման պատմությունից

Մարդկության մտքի զարգացման ողջ պատմությունը կապված է գրքի և գրադարանների հետ: Սա բոլորովին էլ խաղաղ պատմություն չէ, քանի որ միշտ պատերազմել են գրքերի համար. . . Իսկ այժմյան գրադարանները կարծես լռության արտացոլանքն են, և ինչպես բոլոր ժամանակներում նրանք ծառայում են մարդկության զարգացմանը: Ամենապարզ հասկացողությամբ գրադարանն այն վայրն է, որտեղ պահում են գրքեր: Հունարենից թարգմանությամբ նշանակում է «գրապահոց»: Առաջին գրադարանները շատ ավելի վաղ են հայտնվել, քան գրքերը:

1.1. Գրադարանների դերը եվ նշանակությունը ժամանակակից աշխարհում

Գրադարանները՝ որպես գրավոր հուշարձանների պահոցներ, գոյություն են ունեցել հազարամյակներ ի վեր: Հին աշխարհի ամենամեծ գրադարանը (մ.թ.ա. I դ.) Եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաքում էր. ուներ մինչև 700 հազար ձեռագիր: Ալեքսանդրիայում սովորելու տարիներին այդ գրադարանից օգտվել են Մովսես Խորենացին և Մեսրոպ Մաշտոցի մյուս աշակերտները: Հայաստանում գրադարանները եղել են վանքերին ու մենաստաններին կից. տեղակայվել են առանձին շինություններում կամ վանքամերձ քարայրներում և կոչվել են գրատուն, գրանոց, գանձատուն, մատենադարան, դիվան, երբեմն էլ՝ նշխարանոց, նշխարախոց: Գրադարանները ազգերի, անշուշտ, նաև հայերի հոգևոր կյանքի և մշակույթի զարգացման մեջ կատարել ու այսօր էլ կատարում են անփոխարինելի դեր: Յուրաքանչյուր գրադարան կոչված է իրականացնելու իրեն հատուկ գործառույթները՝ պատմամշակութային, տեղեկատվական, հաղորդակցական, տեխնոլոգիական, մանկավարժական, վիճակագրական, սպասարկման և այլն: Որևէ գրադարանի առաջնահերթ խնդիրն է կազմակերպել իր գրականության վերաբերյալ տեղեկատվություն՝ ընթերցողներին լավագույնս սպասարկելու համար: Ուստի՝ անհրաժեշտ է սպասարկելի դարձնել գրադարանի գրքային ունեցվածքը: Դա

նշանակում է, որ պետք է ստեղծել տեղեկատուներ, որոնցով հնարավոր լինի ընթերցողներին տեղյակ պահել գրադարանի ունեցած գրականության մասին՝ նրանց ապահովելով անհրաժեշտ տեղեկատվությամբ: Գրադարանի՝ մշակութային հաստատություններից մեկի սոցիալական գործառույթները մարդկության պատմության ընթացքում ենթարկվել են փոփոխությունների: Առաջին գրադարանների նպատակը եղել է փաստաթղթերի պահպանումը: Գրադարանը վերածվել է հասարակական կառույցի, որը ներառում է տեղեկատվական և մշակութային բաղադրիչներ և ապահովում է հասարակական կապերի ու հարաբերությունների կայունությունը:

1.2. Առաջին գրքի ստեղծումը:

Գրքի գյուտը սերտորեն կապված է հին ժամանակների մյուս հայտնագործությունների հետ, ինչպիսիք էին՝ գիրը, թուղթը, թանաքը:

Գրադարանները գրքի ու գրականության շտեմարաններ են, մտքի գանձերի պահպանման սուրբ օջախներ, այն օջախները, որտեղ ամբարվում են հանճարների ստեղծած մտավոր գանձերը: Գիրքն է, որ հնարավորություն է ստեղծում՝ ընթերցողին հաղորդակցվելու անցյալի փորձին ճանաչելու աշխարհն ու շրջակա միջավայրը, պատկերացումներ կազմելու ապագայի մասին, իմանալու «զանս հանճարոյ»:

Գիրքը յուրահատուկ արտադրանքի տեսակ է, որը կազմված է էջերից, և որոնց վրա տպագիր կամ ձեռագիր միջոցով տեղակայված է որևէ տեղեկություն: Սլավոնական լեզվով այն կոչվում էր «kniga», որը նշանակում էր «ուրբել»: Արդեն միջին դարում ստեղծված 7 առաջին գրքերը համարյա չէին տարբերվում ժամանակակից գրքերի կառուցվածքից, նրանք բաղկացած էին էջերից և կազմից: Այդ գրքերը շատ թանկարժեք էին: Մեկ գիրք պատրաստելու համար անհրաժեշտ էր կենդանու 500 կաշի, 2-3 տարի գրագրի և նկարչի աշխատանք: Նրանց կազմը հաճախ զարդարում էին ոսկով և թանկարժեք քարերով: Այդ իսկ պատճառով միայն շատ հարուստները կարող էին թույլ տալ այդ ճոխությունը իրենց տանը գիրք ունենալ: Միջին դարերում

գրագիտություն ունեցող մարդիկ աննշան էին: Դրանք հիմնականում վանականներ, գիտնականներ և պետական պաշտոնյաներ (դպիրներ) էին:

Եվրոպայում 15-րդ դարի սկզբին Յոհան Գուտենբերգի կողմից հայտնաբերվում է առաջին տպագրական սարքը: 1450 թ-ին նա սովորական ձիթե մամլիչը վերածում է տպագրական հաստոցի և հարմարեցնում տպագրության համար: Բայց գլխավորն այն էր, որ նա հայտնագործում է այնպիսի տպած, որը հնարավորություն է տալիս ստանալ բնագրի ցանկացած քանակության տպագրված օրինակներ:

Գուտենբերգի փայլուն գյուտը տպագրական մամուլի ստեղծումն էր: Երբ տպագրված գրքերը հայտնվում են, հնարավոր է դառնում գիտելիքներ տարածել ոչ միայն արտոնյալ դասի՝ ազնվականների, հոգևորականների, գիտության ներկայացուցիչներ մեջ: Աստիճանաբար մեքենայի օգնությամբ ստեղծված գրքերը հասանելի են դառնում նաև բնակչության մնացած խավերին: Գուտենբերգի գյուտից ընդամենը մի քանի տասնամյակ անց հայերն սկսեցին այդ եղանակով գրքեր տպագրել:

Հայկական տպագրության հիմնադիրը Հակոբ Մեղապարտն է, ով 1512թ-ին լույս ընծայեց հայերեն առաջին տպագիր գիրքը՝ «Ուրբաթագիրքը»: Երկրորդ հայ տպագրիչն՝ Աբգար Թոխաթեցին է:

1920-ական թվականներից հայկական տպագրության կենտրոնն աստիճանաբար դարձավ Երևանը: Ներկայումս տպարաններ են գործում մեր երկրի բոլոր մեծ ու փոքր քաղաքներում: Հայերեն գրքեր ու պարբերականներ են տպագրվում նաև հայկական սփյուռքում:

Գիրք, ձեռագիր, տպագիր կամ այլ կրիչի վրա գրական-գեղարվեստական, հասարակական-քաղաքական, գիտական բովանդակությամբ ստեղծագործություն: Գիրքը և՛ դյուրակիր նյութական առարկա է, և՛ աննյութեղենի կամ մտավորի մարմնավորումը, որի նյութական արտահայտությունը գրավոր նշաններն են, տողերը կամ էլ երկչափ զանազան միջոցներ:

Գիրքը՝ որպես նյութական առարկա, ուղղանկյուն էջերի (պատրաստված պապիրուսից, մագաղաթից, մոմաթղթից կամ թղթից) ամբողջություն է՝ ամրացված, կարված կամ այլ եղանակով միացրած, իսկ հետո կապված ավելի ամուր, հարաբերականորեն ոչ այնքան ճկուն պաշտպանիչ շերտի ճկուն կոնակին: Այս բոլոր գործողությունների համար կա հատուկ տերմին՝ ձեռագիրը: Ձեռագիր գրավոր ստեղծագործությունների կամ հիշատակարանների ձևավորման պատմության մեջ ձեռագիրը անմիջականորեն հաջորդում է մագաղաթին: Ձեռագրի եզակի միավորը կոչվում է թերթ, իսկ թերթի յուրաքանչյուր կողմը՝ էջ:

Ի սկզբանե գիրքն ընկալվել է որպես մտավոր գործունեության արդյունք, մեծածավալ երկ, որի ստեղծումը պահանջում է ժամանակի զգալի ներդրում և նույնքան էլ (թեպետ ոչ այնքան մեծ) ժամանակ՝ ընթերցելու համար: Լայն իմաստով գիրքը ստեղծագործական ամբողջությունն է այնպիսի մասերի, որոնք կոչվում են գրքեր, գլուխներ և դիտվում են որպես ընդհանուրի բաղկացուցիչ մասեր:

Նյութեղեն գրքի մտավոր բաղադրիչը, սակայն, չի ենթադրում, որ գիրքը պարտադիր գրավոր ստեղծագործություն պիտի պարունակի գիրք համարվելու համար: Այն կարող է ներառել նկարներ, փորագրանկարներ կամ լուսանկարներ, կամ էլ խաչքառեր ու նկարազարդման տարրեր: Գիրքը՝ որպես նյութական առարկա, կարող է պարունակել դատարկ էջեր, տողեր՝ նշումներ կատարելու համար, կարող է լինել օրագիր, հաշվառման գիրք, ինքնագրերի գիրք, նշումների գիրք: Գրքերը կարող են ներկայացվել էլեկտրոնային տարբերակով և այլ ֆորմատներով:

8-րդ դարում Եվրոպայում ստեղծվում են առաջին բուհերը, քանի որ պետությունը կարիք ուներ ավելի շատ կիրթ մարդկանց, սակայն ուսանողները չէին կարողանում իրենց թույլ տալ գնել այդ թանկարժեք գրքերը: Ավելի հաճախ գիրքը հասանելի էր միայն դասախոսին, ով կարդում էր դասախոսությունը, և լսողները պետք է հիշեին և անգիր անեին այն:

Ներկայումս տպարաններ են գործում մեր երկրի բոլոր մեծ ու փոքր քաղաքներում:

1.3. Էլեկտրոնային գիրքի մասին:

Գուտենբերգի տպագրության գյուտից հետո գրքի տպագիր տարբերակը համարվել է բոլոր խավերի համար հասանելի միակ տեղեկատվության աղբյուրը: Բայց 20-րդ դարում համակարգիչների մուտքը հեղաշրջում կատարեց տեղեկատվության պահոցներում՝ առաջադրելով գրադարանների, արխիվների, թանգարանների աշխատանքի նորովի կազմակերպում:

Գրքերը, որոնք պահպանվում են էլեկտրոնային տարբերակով համացանցի որոշակի սերվերների վրա, կոչվում են էլեկտրոնային գրքեր: Սերվերի վրա տեղադրվելուց հետո գրքի հնարավոր սպառողները տեղեկացվում են գրքի գոյության մասին, իմանում են դրա էլեկտրոնային հասցեն, ու գիրքը այսուհետև դառնում է հանրության համար օգտագործելի: Դրանց առանձնահատկություններից մեկը որոնման զարգացման միջոցներն են՝ ըստ հեղինակների, թեմաների ու նյութերի: Էլեկտրոնային գրադարանները, ի տարբերություն այլ գրադարանների, որտեղ պահվում են հրատարակված գրքերը, ավելի մատչելի են, և յուրաքանչյուր ոք աշխարհի որ ծայրում էլ գտնվի, կարող է ցանկացած պահի էլեկտրոնային գրադարանում որոնել ու գտնել իր նախընտրած գիրքը:

Արդյունքում աճում է ոչ թե տպագիր, այլ էլեկտրոնային գրքի պահանջարկը: Մայքլ Հարթ (1947-1911): Առաջին էլեկտրոնային գրքի, ինչպես նաև էլեկտրոնային գրադարանի «Գուտենբերգ» նախագծի հեղինակը Մայքլ Հարթն է. 1971 թ. հուլիսի 4-ը կարելի է համարել առաջին էլեկտրոնային գրի, տեքստի ծննդյան օրը: Այդ օրը Մայքլ Հարթը ստեղծեց առաջին 15 էլեկտրոնային գիրք, տեքստը՝ ԱՄՆ-ի անկախության հռչակագրի էլեկտրոնային պատճենը: Այն դարձավ աշխարհում առաջին թվայնացված տեքստը: Դրանից բացի՝ այն համացանցում հրապարակված առաջին փաստաթուղթն է:

Այդ ժամանակ էր, որ սկիզբ դրվեց «Գուտենբերգ»՝ գրքերը թվայնացնելու և դրանք համացանցում ազատ տեղադրելու նախագծին՝ բոլոր օգտվողներին հնարավորություն տալով օգտվել ազատ թվանշային գրադարանից:

1971 թվականին Մայքլ Հարթը Իլլինոյս նահանգի համալսարանում ստացավ անսահմանափակ թույլտվություն Xerox Sigma V-ի մեծ համակարգչի վրա պատճենահանելու առաջին էլեկտրոնային գիրքը: Այսպես գրքերի մեծ քանակության էլեկտրոնային պատճենների ստեղծման ճանապարհով սկիզբ դրվեց «Գուտենբերգ» նախագծին: Այդ նախագծով ստեղծվեց առաջին էլեկտրոնային գրադարանը, որը մատչելի է հանրությանը, և որում պաշտպանված է գրողի հեղինակային իրավունքը: Փաստերը ցույց են տալիս, որ թվանշային պարբերականների թիվը տարեցտարի աճում է, իսկ գները նվազում են: Ավանդական գրքերի հրատարակությունը նվազում է, իսկ գները աճում են: «Գուտենբերգ» նախագիծը գործում է մինչև օրս: Այս նախագիծը առևտրային չէ: Այն գոյություն ունի կամավորների աշխատանքի շնորհիվ, ովքեր օգնում են թվայնացնել, խմբագրել և հրատարակել գրքեր: «Գուտենբերգ» նախագիծը հեղափոխություն կատարեց գրքի շուկայում, ինչպես նաև բարձրացրեց հեղինակային իրավունքի հարցը համացանցում:

Գրադարանավարը դարձավ տեղեկատվական ոլորտի փորձագետ, եթե առաջինի աշխատանքը դարձավ ավելի բարդ ու ծավալուն, ապա ընթերցողն ստացավ լայն հնարավորություն՝ օգտվելու տարաբնույթ ծառայություններից:

Հայաստանյան շատ գրադարաններ, արխիվներ, թանգարաններ ևս ձեռնամուխ են եղել թվային գրադարանի ստեղծմանը: Շատ գրքեր էլեկտրոնային տեսքով անվճար են, կամ ավելի էժան, քան թղթից գրքերը: 5000 կտոր գիրք պահելու համար անհամեմատ ավելի ծախսեր են պահանջվում, քան մեկ ընթերցանիչի գինն է:

Թվանշային տեխնոլոգիաների զարգացումը, մասնավորապես՝ համացանցի առկայությունը, հնարավորություն տվեց մարդկությանը մշակութային ժառանգությունը հասանելի դարձնելու աշխարհի ցանկացած մասերում:

1.4. Գրացուցակ

Ի՞նչ է գրացուցակը: Գրացուցակ (կատալոգ), գրադարանում պահվող տպագիր երկերի ցուցակ է, որը գրադարանային ֆոնդի բովանդակության բացահայտման, գրքեր ընտրելիս ընթերցողներին օգնելու միջոց է:

Ըստ հատկացվածության՝ գրացուցակները բաժանվում են ընթերցողականի, որ ունի տեղեկատու հանձնարարական բնույթ, և ծառայողականի, որ իր մեջ ներառում է նաև սակավ պահանջվող և հնացած ստեղծագործություններ:

Ըստ նյութի խմբավորման՝ դրանք լինում են՝ սիստեմատիկ, առարկայական, այբբենական, համարակալված և այլն: Սիստեմատիկ գրացուցակում տպագիր արտադրանքի նկարագրությունը խմբավորվում է ըստ գիտության տարբեր ճյուղերի, բաժինների՝ տվյալ գրադարանում ընդունված գրադարանամատենագիտական դասակարգման համաձայն: Առարկայականի նկարագրությունը խմբավորվում է՝ ըստ այն առարկաների (երևույթների, հասկացությունների, օբյեկտների) այբբենական կարգի, որոնց մասին խոսք կա տպագիր արտադրանքում: Այբբենականում նկարագրումը կատարվում է՝ ըստ հեղինակի ազգանվան կամ վերնագրի (եթե նկարագրությունը կազմված է վերնագրով), այբբենական կարգով: Գրացուցակներում արտացոլվում են տպագիր երկերի տարբեր տեսակներ՝ գրքեր, պարբերական հրատարակություններ, աշխարհագրական քարտեզներ, նոտաներ, տպագիր գծանկարչական ստեղծագործություններ, տիպօրինակներ, արտոնագրեր և հեղինակային վկայականներ: Յուրաքանչյուր գրադարանի համար պարտադիր են սիստեմատիկ և այբբենական գրացուցակները: Կազմվում է նաև պարբերական մամուլի հոդվածների քարտարան: Առարկայական գրացուցակը կիրառվում է գիտական ու մասնագիտական գրադարաններում: Խոշոր գրադարաններում գրադարանի ողջ ֆոնդն արտացոլող գլխավոր գրացուցակներին զուգահեռ կարող են ստեղծվել նաև ֆոնդերի առանձին բաժինները բացահայտող գրացուցակներ: Ըստ ձևի՝ գրացուցակները լինում են քարտային, տպագիր (գրքի ձևով), բլոկնոտաքարտային (ազատ ներդրվող էջերով, բլոկնոտի կամ ալբոմի ձևով): Ավելի շատ տարածված է քարտայինը, որը թույլ է տալիս հարկ եղանակով դեպքում փոփոխություն և լրացում անել:

Այսպիսով՝ գրադարաններում գրացուցակի առկայությունը պարտադիր պայման է: Այժմ գրադարանների զգալի մասը աշխատում է էլեկտրոնային գրացուցակներով, ինչը անհամեմատ մատչելի է դարձնում սպասարկման աշխատանքները գրադարանում:

ԳԼՈՒԽ 2

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ

ԳՐԱԴԱՐԱՆԸ



2.1. Գրադարանի պատմությունից:

Ստեփանավանի կենտրոնական գրադարանը կազմավորվել է 1996 թվականին ԳԿՀ-ի կենտրոնական գրադարանի ֆոնդի հիման վրա:

Ներկայումս գործում է միայն կենտրոնական գրադարանը, քաղաքում եղած մյուս գրադարանները լուծարվել են, ֆոնդը միացվել է կենտրոնական գրադարանին: Ներկայումս ֆոնդը կազմում է 93647 կտոր գրականություն: Այն համալրվում է հիմնականում նվիրատվությամբ: Վերջին մեկ տարում նվիրատվությունների թիվը կազմում է 950 կտոր գիրք: Ընթերցողների թիվը՝ 2765:

Գրադարանի զարգացումը:

Ավելի քան հինգ տասնամյակի ընթացքում գրադարանում հարուստ ավանդույթներ են ձևավորվել, և ուրախությամբ պետք է նշել, որ ավանդույթներին զուգահեռ կարողացել են քայլել ժամանակին համահունչ. գրադարանը հավատարմագրվել է և 2016 թվականին ստացել հանրային գրադարանի կարգավիճակ, զինվել ժամանակակից բարձր տեխնոլոգիական սարքվորումներով:



Կապ է պահպանվում Երևանի Ավետիք Իսահակյանի անվան գրադարանի հետ:

Ընթերցողների պահանջները բավարարելու համար գրադարանն օգտագործել է հովանավոր կազմակերպությունների հնարավորությունները:

2003 թվականին Բաց Հասարակության Ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի հովանավորությամբ կազմակերպված «Հանրային գրադարանները որպես հեռահաղորդակցության կենտրոններ» մրցույթում գրադարանը հաղթող ճանաչվեց, որի շնորհիվ ձեռք բերվեց համակարգչային տեխնիկա:

Համոզված ենք, որ գրադարանային գործառույթների ավտոմատացումն ավելի կսերտացնի ընթերցող-գիրք-գրադարան կապը: Գրադարանում կատարվում են աշխատանքներ, շուտով կսկսվեն թվայնացման աշխատանքները:

2012 թվականին գրադարանը հանրապետությունում ճանաչվել է որպես համայնքային լավագույն գրադարան: 2015-ին գրադարանը հավատարմագրվեց իր անցած պատմության, կատարված գործերի համար: Մոտ յոթ միլիոն դրամի գույք ձեռք բերվեց, որը փոխեց գրադարանի դեմքը: Դրա հիման վրա ստեղծվեց «Արմաթ» ինժեներական կենտրոնը, որտեղ սովորում են ինչպես Ստեփանավանի և շրջակա գյուղերի, այնպես էլ Տաշիրի տարածաշրջանի բնակիչներ: «Արմաթ» լաբորատորիայի ներդրումը կտրուկ ավելացրել է ընթերցողների թիվը:

Գրադարանում կազմակերպվող միջոցառումներ:

Կազմակերպվում են բազմաբնույթ միջոցառումներ, որոնք հետաքրքիր են դարձնում ընթերցասեր հասարակության կյանքը, մատաղ սերնդի ուշադրությունը հրավիրում գրքի ու գրականության, տպագիր և էլեկտրոնային գրքի, գրադարան այցելելու մշակույթի վրա: Համաքաղաքային բոլոր միջոցառումները կազմակերպվում են գրադարանում: Գրադարանը համագործակցում է Մշակույթի պալատի հետ: Այն ունի մասնագիտական և ժամանակակից գրականության կարիք:

Գրադարանի ու գրադարանավարի զարգացումն ու առաջընթացը:

Շատ կարևոր է համայնքային գրադարանների զարգացումն ու հզորացումը, դրանց նյութական և տեխնիկական զինումը: Համայնքային գրադարանները ռեսուրս կենտրոններ են, որոնք պետք է սպասարկեն տարածաշրջանի դպրոցներին և միջին մասնագիտական ու բարձրագույն հաստատություններին, ինչպես նաև առհասարակ համայնքի բնակչությանը: Ուստի՝ կարևոր է, որ համայնքային գրադարանը տեղեկացված լինի և համահունչ քայլի նորագույն ժամանակներին, կազմակերպի և մասնակցի տարբեր միջոցառումների: Ճանապարհներ գտնի՝ իր ընթերցողներին հրամցելու արդի ժամանակաշրջանի նոր հարտարակվող գրքերը, կապեր հաստատի ժամանակակից գրողների հետ: Այս առումով համայնքային գրադարանները պետք է դառնան միջմշակութային կապող օղակ և ծառայեն իրենց նպատակին:

Այսպիսի պայմաններում անխուսափելի են դառնում գրադարանավարների մշտական վերապատրաստումները, փորձի փոխանակումները իրենց գործընկերների հետ: Գրադարանավարը պետք է զարգացնի իր հմտություններն ու կարողությունները, սովորի SS ոլորտի մի շարք համակարգչային և գրադարանին անհրաժեշտ ծրագրեր, կարողանա զբաղվել թվայնացման, սքանավորման, պատճենահանման աշխատանքներով, ապահովի միջգրադարանային կապեր, տիրապետի ռեսուրսների փնտրման համակարգերին:

Գրադարանի զարգացման գործում շատ կարևոր է դառնում գրադարանի՝ սոցիալական ցանցերում ներկայացված լինելը, ինչը սերտ կդարձնի տարբեր

գրադարանների միջև կապը և կնպաստի տեղեկատվության տարածմանն ու իրազեկմանը:

Այս ամենի հետ մեկտեղ կարևոր է դառնում համայնքային գրադարանի բլոգի կամ վեբ կայքի առկայությունը:

2.2. Բլոգը ժամանակակից գործիք: Բլոգի մասին:

Բլոգներին բնորոշ են տվյալ ժամանակահատվածի ակտուալ գրառումները, որոնք դասավորվում են հակառակ ժամանակագրական դասավորությամբ (վերջին գրառումը՝ սկզբում): Ավանդական օրագրերից բլոգը տարբերվում է նրանով, որ այն սովորաբար հասարակական է և նախատեսում է կողմնակի ընթերցողներ, որոնք կարող են հրապարակային բանավեճի մեջ մտնել հեղինակի հետ (բլոգային գրառմանն արած մեկնաբանությունների, կամ սեփական բլոգային գրառումների միջոցով): Բլոգ վարող անձանց անվանում են բլոգերներ: Ըստ հեղինակների կազմի՝ բլոգները լինում են անձնական, խմբակային (կորպորատիվ, ակումբային) կամ հրապարակային (բաց):

Բլոգները	տարբերակվում	են
----------	--------------	----

Ըստ հեղինակների

- ✓ Անձնական բլոգ — վարվում է մեկ անձի (հեղինակի) կողմից
- ✓ «Ուրվական» բլոգ — վարվում է անհայտ անձի կողմից, մեկ այլ անձի անունից
- ✓ Կոլեկտիվ կամ սոցիալական բլոգ — վարվում է մի խումբ մարդկանց կողմից՝ բլոգի տիրոջ կամ մոդերատորների կողմից որոշված կանոններով
- ✓ Կորպորատիվ բլոգ — վարվում է մեկ կազմակերպության անդամների կողմից

Ըստ բովանդակության տեսակի/

- ✓ Տեքստային բլոգ — հիմնականում պարունակում է տեքստեր
- ✓ Ֆոտոբլոգ — հիմնականում պարունակում է լուսանկարներ
- ✓ Երաժշտական բլոգ — հիմնականում պարունակում է երգեր
- ✓ Պոդկաստինգ կամ բլոգկաստինգ — հիմնական պարունակությունը կազմում են ձայնագրիչի միջոցով ձայնագրված ձայնային հաղորդագրությունները

- ✓ Վիդեոբլոգ — հիմնականում պարունակում է տեսանյութեր

Ըստ բովանդակության առանձնահատկության

- ✓ Կոնտենտային բլոգ — բլոգ, որտեղ հրապարակվում են հեղինակային նյութեր
- ✓ Մոնիտորինգային բլոգ — բլոգ, որը հիմնականում պարունակում է հղումներ դեպի այլ կայքեր
- ✓ Մեջբերումներով բլոգ — բլոգ, որտեղ հատվածներ են մեջբերվում այլ բլոգներից
- ✓ Տամբլեյթ, Տամբլոգ, Տլոգ — բլոգ, որի յուրաքանչյուր գրառում ունի որոշակի ֆորմատ՝ հղում, մեջբերում, վիդեո, լուսանկար, երկխոսություն, կամ այլ
- ✓ Սպլոգ — սպամ-բլոգ

Ըստ տեխնիկական հիմքի

- ✓ Stand alone բլոգ — առանձին հոստինգի և «շարժիչի» վրա կառուցված բլոգ
- ✓ Պլատֆորմային բլոգ — որևէ պլատֆորմի վրա գետեղված բլոգ
- ✓ Մոբլոգ — բլոգ, որը վարվում է բջջային կամ շարժողական տեխնիկական միջոցներով

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով աշխատանքը՝ կարելի է ասել, որ ժամանակակից համայնքային գրադարաններն առավել հասանելի են ուսանողների, աշակերտների, ուսուցիչների և առհասարակ ողջ հանրության համար: Այսօր չափազանց հեշտացված է նյութի որոնումը: Սպասարկումն ամբողջությամբ կառուցված է ընթերցողի ժամանակը խնայելու, նրա աշխատանքը հաճելի և դյուրին դարձնելու սկզբունքի վրա:

Գրադարանային միջավայրը չի կարող միապադադ և անհրապույր լինել, ընդհակառակը՝ այն գրավիչ, հարմարավետ, օգտագործելի և կենսունակ լինելով է ապահովում, խթանում ընթերցողի, անհատի և խմբերի ստեղծագործական, ուսումնական, հետազոտական աշխատանքների իրականացումը: Գրադարանավարի արհեստավարժությունից, փորձից, գիտելիքների պաշարից, մի խնդրից մյուսին անցնելու հմտությունից բացի՝ կարևոր են դառնում նրա անհատական գծերն ու նվիրվածությունը գրադարանի առջև դրված խնդիրների լուծման գործին:

Ստեփանավան քաղաքի համայնքային գրադարանը մեծ դեր է կատարում ընթերցասեր հանրության համար:

Համայնքային գրադարանները պետական հոգածության կարիք ունեն: Հետևողականորեն իրականացվող մշակութային ծրագիր է պետք, որի միջոցով գրադարանները կդադարեն գրապահոց լինելուց և կդառնան մշակութային օջախներ, ինչպես եղել են նախկինում՝ այսպես են մտածում են գրադարանային գործիչները:

Ստեփանավանի կենտրոնական գրադարանը կարիք ունի համալրվելու նոր գրականությամբ, քանի որ երիտասարդները, այցելելով գրադարան, չեն գտնում այն ժամանակակից ու նոր գրականությունը, ինչն այսօր հոգեհարազատ է իրենց:

Գրադարանին հարկավոր է նաև ժամանակակից տեխնիկայով կահավորված ընթերցասրահ, որ ընթերցողին առաջարկվի գրքի էլեկտրոնային տարբերակը: **Եվ վերջում.**

«Գիրքը պետք է կարդալ մատիտը կամ գրիչը ձեռքին: Ոչ մի բան այնպես չի ձևավորում ճաշակն ու դատողությունների ճշտությունը, ինչպես դուր եկած հատվածն արտագրելու կամ խորհմաստ միտքը նշելու սովորությունը»:

Անդրե Մորուա

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ*

Տպագիր և էլեկտրոնային աղբյուրներ

1. Ռաֆայել Իշխանյան «Հայ գրքի պատմություն», հատոր 1, Երևան, Անտարես, 2012
2. [Հայաստանի դպրոցների գրադարանների ձեռնարկ](#), Երևան 2011
3. Տիգրան Զարգարյան, «Թվային գրադարաններ», Երևան 2002
4. «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի [«Գրադարանավարի բլոգ»](#)
5. 2017 թվական, Մարի Գաբանյան և ընկերներ [Ուղեցույց ժամանակակից գրադարանավարների համար](#)
6. [Վիքիդեպիա](#)

**Ցանկում ներկայացված են գրականության և տպագիր էլեկտրոնային աղբյուրները, որոնցից ազդեցություն է կրել աշխատանքը:*